Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«-2-» օգոստոսի 2021 թ. թիվ 158 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

_____ Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական աշխատողի ատեստավորում անցկացնելու

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնակարգով սահմանվում է ՀՀ ԳԱԱ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) գիտական աշխատողի՝ զբաղեցրած գիտական պաշտոնին համապատասխանությունը հաստատելու կարգը:

Ատեստավորում անցկացնելու հիմք են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ կառավարության 2001 թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» թիվ 935 որոշմամբ հաստատված գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 1121-Լ որոշմամբ հաստատված նվազագույն պաշտոնային դրույքաչափը հաշվարկելու գործակիցների աղյուսակում նշված գիտական աշխատողների պաշտոնների տարակարգերը:

1 Ատեստավորում

1. Սույն կարգով կարգավորվում են գիտական աշխատողի, այդ թվում՝ համատեղությամբ, ատեստավորելու ընթացքն ու հարաբերությունները:
2. Ատեստավորումը զբաղեցրած պաշտոնին գիտական աշխատողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելն է:

Ատեստավորման նպատակն է.

ա/ գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և գիտական արդյունքները,

բ/ պարզել գիտական աշխատողի մասնագիտական կարողությունների համապատասխանությունը

զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորմանը երեք անգամ անհարգելի պատճառով չներկայանալը գիտական աշխատողին պաշտոնից ազատելու հիմք է:

1. Գիտական աշխատողի հերթական ատեստավորում ասնցկացվում է առնվազն հինգ տարին մեկ:
2. Գիտական աշխատողն արտահերթ ատեստավորվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո՝ ըստ սույն կարգի դրույթների, համապատասխան հիմքեր ի հայտ գալու, աշխատողի անմիջական ղեկավարի և/կամ ինստիտուտի տնօրենի դրա մասին գրավոր հիմնավորում ներկայացնելու դեպքերում:
3. Գիտական աշխատողն արտահերթ ատեստավորվում է նաև այն դեպքում, եթե նրա գիտական հետազոտությունները իրականացվել են գիտական կամ գիտատեխնիկական գործունեության շրջանակում կնքված պայմանագրերին անհամապատասխան, ընթացիկ ժամանակահատվածում նա հնարավոր միջոցներ չի ձեռնարկել՝ պարտականությունները պատշաճ կատարելու և/կամ որակավորման մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև խախտվել են գիտական և գիտատեխնիկական գործունեությանն առնչվող հարաբերությունները կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջները:
4. Ատեստավորման ենթակա չեն՝

ա/ տվյալ պաշտոնը երկու տարուց պակաս զբաղեցնող գիտական աշխատողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,

բ/ հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ ձևակերպած գիտական աշխատողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,

գ/ պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած գիտական աշխատողները՝ վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել,

ե) վարչական պաշտոններ զբաղեցնող աշխատողները (տնօրեն, փոխտնօրեն, գիտական քարտուղար, լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, գիտական խմբի ղեկավար և այլն), որոնք հրամանագրված են տվյալ պաշտոնում որոշակի ժամանակահատվածով:

5. Հղիության և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող գիտական աշխատողները ատեստավորվում են արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:
6. Արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ գիտական աշխատողները ատեստավորվում են աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:
7. Կազմակերպություններում ատեստավորումը անցկացվում է ըստ հետևյալ պաշտոնների՝

9.1 Գիտական պաշտոններ.

ա) գլխավոր գիտական աշխատող,

բ) առաջատար գիտական աշխատող,

գ) ավագ գիտական աշխատող,

դ)գիտական աշխատող,

ե) կրտսեր գիտական աշխատող,

զ) ավագ լաբորանտ,

9.2. ճարտարագիտատեխնիկական պաշտոններ:

Գիտական աշխատողների որակավորման գնահատման չափանիշներն այն պահանջներն են, որոնք ներկայացվում են տվյալ տարակարգը հայցող գիտական աշխատողին: Որակավորումը գնա-

հատող չափանիշները սահմանելիս հաշվի են առնվում նաև տվյալ գիտական աշխատողի տարակարգին համապատասխան պարտականությունները:

Այն պաշտոնները, որոնք տարակարգված չեն գիտական աշխատողների տարակարգմամբ և նշված են այլ անվանումներով, և որոնց գործունեության բնույթը բավարարում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի բ/ ենթակետի՝ գիտական աշխատողին ներկայացվող պահանջներին, պետք է ատեստավորվեն, տարակարգվեն ու ներկայացվեն գիտաշխատողների պաշտոնների տարակարգմամբ:

8. Տվյալ գիտական պաշտոնի չափանիշները չբավարարող, սակայն պաշտոնը զբաղեցրած գիտաշխատողները չեն կարող ատեստավորվել տվյալ պաշտոնում. այն ենթակա է փոփոխման:

Գիտական աշխատողն ատեստավորվում է առնվազն 5 տարին մեկ: Ատեստավորման ժամանակացույցը սահմանվում է ինստիտուտի տնօրենի հրամանով, և ատեստավորվող անձինք տեղեկացվում են ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ: Գիտական աշխատողների ատեստավորում անցկացնելու համար ինստիտուտի տնօրենի հրամանով ստեղծվում է ինստիտուտի 5-7 առաջատար գիտնականներից բաղկացած ատեստավորման հանձնաժողով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով նշանակվում են հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

II. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

10. Ատեստավորման ենթակա գիտական աշխատողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ ծանուցվում են ատեստավորվելու անհրաժեշտության մասին՝ լրացնելով տեղեկացման թերթիկը (Ձև N 1):
11. Ատեստավորումից առնվազն 15 օր առաջ հանձնաժողովին է ներկայացվում ատեստավորվող գիտական աշխատողի՝

ա/ անմիջական ղեկավարի բնութագիրը, որում նշվում են գիտական աշխատողի նախորդ ատեստավորումից հետո կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների և կատարողականների գնահատականները:

բ/ ատեստավորվող գիտական աշխատողը հանձնաժողովին ներկայացնում է իրեն վերաբերող տեղեկություն՝ ըստ Ձև N 3-ի:

12. Գիտական աշխատողը ատեստավորման պահից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր բնութագրին: Բնութագրին համաձայն չլինելու դեպքում գիտական աշխատողը ներկայացնում է գրավոր առարկություններ, որոնք բնութագրի հետ փոխանցվում են ատեստավորման հանձնաժողովին:
13. Ատեստավորվող գիտական աշխատողի բնութագիրը, գործունեությանը վերաբերող տեղեկությունը, տեղեկացման թերթիկը մինչև ատեստավորումը հանձնաժողովի քարտուղարը ներկայացնում է հանձնաժողովի անդամներին:
14. Ատեստավորումն անցկացվում է գիտական աշխատողի անմիջական մասնակցությամբ՝ հարցազրույցով: Հանձնաժողովը յուրաքանչյուր գիտաշխատողի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:
15. Ատեստավորումն անցկացվում է գիտաշխատողի անմիջական ղեկավարի պարտադիր մասնակցությամբ: Հանձնաժողովը քննարկում է գիտաշխատողի՝ բնութագրին վերաբերող գրավոր առարկությունները:
16. Գիտաշխատողի հետ հարցազրույցից հետո անցկացվում է փակ քվեարկություն: Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ ընդունվում է որոշում:
17. Ատեստավորման արդյունքներն ու հանձնաժողովի երաշխավորությունները նիստից հետո 5 օրվա ընթացքում ներկայացվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենին, որոնք տվյալ գիտական աշխատողի պաշ-

տոնը բարձրացնելու կամ իջեցնելու, պաշտոնից ազատելու, պաշտոնական դրույքաչափը բարձրացնելու կամ իջեցնելու ու հավելավճար սահմանելու հիմք են:

III. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

18. Գիտական աշխատողի ատեստավորման արդյունքները կարող է գրավոր բողոքարկել ատեստավորման արդյունքին չհամաձայնող տվյալ աշխատողը և/կամ հանձնաժողովի անդամը՝ ատեստավորման թերթիկին ծանոթանալուց հետո հինգօրյա ժամկետում: Գրավոր բողոքը, նշելով բողոքարկման պատճառները, ներկայացվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենին և ՀՀ ԳԱԱ համակարգում գործող ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովին՝ քննության նպատակով:
19. Գրավոր բողոքը այն ներկայացնելու օրը կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հանձնարարությամբ փոխանցվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործող հանձնաժողովին:
20. Բողոքը ստանալու օրը կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում՝ տեսանելի ցուցանակին, փակցնում է գրավոր բողոք ներկայացնելու մասին տեղեկություն, որում նշվում է այն աշխատողի անունը, հայրանունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, որի ատեստավորման արդյունքների վերաբերյալ ներկայացվել է գրավոր բողոք:
21. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործող հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը գրավոր բողոքը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում տվյալ աշխատողի ատեստավորմամբ կազմված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և կից նյութերի պատճենների փաթեթն ուղարկում է ՀՀ ԳԱԱ համակարգում գործող բողոքարկման հանձնաժողովին:
22. ՀՀ ԳԱԱ համակարգի բողոքարկման հանձնաժողովը տվյալ աշխատողի ատեստավորմանը վերաբերող փաստաթղթերի փաթեթը ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում քննում է ներկայացված գրավոր բողոքը:
23. Գրավոր բողոքը քննելիս և որոշում ընդունելիս քննարկմանը չի մասնակցում ՀՀ ԳԱԱ այն անդամը, որը տվյալ ատեստավորմանը մասնակցել է որպես հանձնաժողովի անդամ:
24. Գրավոր բողոքը քննության առնելիս ՀՀ ԳԱԱ բողոքարկման հանձնաժողովն ուսումնասիրում է ատեստավորման վերաբերյալ կազմված բոլոր անհրաժեշտ փաստաթղթային տվյալները, ատեստավորման ժամանակ սահմանված ընթացակարգային դրույթների պահպանվածությունը, անհրաժեշտության դեպքում հրավիրում և լսում է բողոք ներկայացրած անձին, ինչպես նաև աշխատողի անմիջական ղեկավարին և/կամ ինստիտուտի՝ ատեստավորման հանձնաժողովի ներկայացուցչին, որից հետո ընդունում է որոշում՝ «բողոքը մերժել» կամ «նշանակել նոր ատեստավորում»:
25. ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական աշխատողի որակավորումը գնահատող ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովը ընդունած որոշումը նույն կամ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը ուղարկում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, որի մասին իրազեկվում է բողոք ներկայացրած անձը: Պահանջի դեպքում բողոք ներկայացրած անձին տրամադրվում է արդյունքների բողոքարկման հանձնաժողովի որոշման պատճենը:
26. Աշխատողի որակավորումը գնահատող ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

անցկացնելու կարգի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ
Գիտաշխատողի ատեստավորում անցնելու

Ես՝ _____
Գիտաշխատողի անունը, ազգանունը

_____
Գիտաշխատողի պաշտոնը

տեղեկացված եմ՝
2021 թվականի սեպտեմբերի 6 -24-ը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում
_____
ատեստավորում անցկացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, վայրը

ատեստավորում անցնելու մասին:

Տեղեկացված եմ նաև, որ ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը գիտաշխատողին պաշտոնից ազատելու հիմք է:

/_____/ /_____/ -. -. 20 թ.

գիտաշխատողի ստորագրությունը | անունը, ազգանունը | ամսաթիվը

/_____/ / _____/ -. -. 20 թ.

ատեստավորման հանձնաժողովի քարտուղարի ստորագրությունը | անունը, ազգանունը | ամսաթիվը

Հավ N 2
գիտաշխատողի
ատեստավորում անցկացնելու կարգի

Ա Տ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

Ատեստավորման եղանակը՝ *հարցազրույց*

1. Ազգանուն, անուն, հայրանուն .....
2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը .....
3. Ատեստավորման պահին զբաղեցրած պաշտոնի անվանումը և այդ պաշտոնին նշանակվելու տարեթիվը .....
4. Քվեարկությանը մասնակցել է ատեստավորման հանձնաժողովի ..... անդամ, որից կողմ՝..... , դեմ՝ ……., անվավեր՝ ……..:
5. Հարցազրույցի արդյունքում ատեստավորման հանձնաժողովի ընդունած որոշումը.

   .....

   .....

Հանձնաժողովի նախագահ՝	.....	(.....)
	անուն, ազգանուն	ստորագրություն
Հանձնաժողովի անդամներ՝	.....	(.....)
	.....	(.....)
	.....	(.....)
	.....	(.....)
	.....	(.....)
	.....	(.....)
	.....	(.....)

Կ.Տ.

Ատեստավորման անցկացման ամսաթիվ՝ ..... 20 թ.

Ծանոթացա ատեստավորման թերթիկին՝ .....

գիտաշխատողի ստորագրություն

Ձև N3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ատեստավորվող գիտաշխատողի գիտական գործունեության և գիտական արդյունքների վերաբերյալ

Գիտաշխատողի անուն-ազգանունը ----------

Գիտաշխատողի պաշտոնը՝ ----------

Գիտական աստիճանը՝ ----------

Գիտական կոչումը՝ ----------

N	Գիտաշխատողի գիտական արդյունքների վերաբերյալ ցուցանիշները	Գործունեության և արդյունքների նկարագրությունը
1.	Վերջին 5 տարում տեղական և արտասահմանյան պարբերականներում տպագրված հոդվածների ընդհանուր թիվը, որից՝	
ա.	Հայաստանյան պարբերականներում (նշել պարբերականի անվանումը)	
բ.	Արտերկրի պարբերականներում (նշել պարբերականի անվանումը)	
2.	Վերջին 5 տարում տպագրված մենագրությունների թիվը, որից՝	
ա.	Հայաստանի Հանրապետությունում (մենագրությունների անվանումները)	
բ.	Արտերկրում (նշել երկիրը)	
3.	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ -ում իրականացվող գիտական հետազոտություններին ներգրավածության աստիճանը՝ նշելով գիտական թեմայի (թեմաների) անվանումը	
4.	Միջազգային գիտական հետազոտական ծրագրերին մասնակցությունը՝ ներառյալ դրամաշնորհային ծրագրերը (նշել ծրագրի տեսակը, անվանումը, ծրագրում զբաղեցրած պաշտոնը, ֆինանսավորման ծավալը, ժամկետները)	
5	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում իրականացվող կիրառական հետազոտություններին ներգրավվածության աստիճանը (տեխնոլոգիական մշակումներ, արտադրական կանոնակարգեր, ներդրումներ, արդյունքների ապրանքայնացում՝ նշելով պայմանագրերը, արտադրատեսակները, արտադրության և իրացման ծավալները)	
6.	Հաշվետու ժամանակահատվածում մանկավարժական գործունեությունը,	
ա.	դասախոսական աշխատանքը (նշել ուսումնական հաստատության անվանումը և դասախոսության ծրագրի անվանումը)	
բ.	դասագրքերը, ուսումնական ձեռնարկները	
գ.	ավարտական և մագիստրոսական թեզերի ղեկավարում (նշել ուսումնական հաստատության անվանումը, թեզերի	

	քանակը, անվանումը)	
դ.	ասպիրանտի կամ հայցորդի ղեկավարում (նշել ասպիրանտի կամ հայցորդի Ա.Ա.Հ., թեմայի անվանումը)	
ե.	դոկտորանտի թեզի գիտական խորհրդատվություն (նշել թեմաների անվանումները)	
7.	Մասնակցությունը փորձաքննական աշխատանքներին, վերլուծական նյութերի և կանխատեսումների պատրաստման ու ներկայացման գործընթացներին (մանրամասն նշել փորձաքննական, վերլուծական աշխատանքի անվանումները, երբ է ներկայացվել և որ պետական մարմնի կամ գերատեսչության կողմից, ինչպիսի արձագանք է ստացվել (կիրառվել է, թե ոչ))	
8.	Գիտաժողովներին մասնակցությունը, այդ թվում՝ մասնակցության տեսակը, տպագրված թեզիսների քանակը (միջազգային և հանրապետական գիտաժողովներում), տարեթիվը	
9.	Արտոնագրերը և հեղինակային իրավունքները (նշել անվանումը, հեղինակային իրավունքի համարը, տարեթիվը)	
10.	Պարգևները, մրցանակները ու կոչումները (պետական, ՀՀ ԳԱԱ–ի կողմից և այլն), տարբեր բնույթի գիտական խորհուրդներին մասնակցությունը (մանրամասն նշել՝ ըստ անվանումների)	
11.	Գիտական գործունեությանը վերաբերող այլ փաստական նյութեր	

Ատեստավորվող գիտաշխատող՝ Անուն-ազգանուն, ստորագրություն

Ամիս-ամսաթիվ

Ձև N4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №

Գիտական աշխատողի որակավորումը գնահատելու նպատակով ատեստավորման նիստի

Ատեստավորման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի **ժամը՝**	**Վայրը՝** ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ
Հանձնաժողովի անդամներ՝	
Նախագահ՝ **Քարտուղար՝**	

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հանձնաժողովի նախագահ՝ _____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Ձև N 5

Հրապարակման թերթիկ

Գիտական աշխատողի ատեստավորման արդյունքների

Կազմակերպության անվանում՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ

անցկացման վայր՝ _____

տարի, ամիս, ամսաթիվ՝_____

N	Անուն, Հայրանուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Հանձնաժողովի որոշում	
			Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին	Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին